Աշխէնը մի քանի անգամ եւս զանազան ձեւերով շուռ տոեց անտանելի բառը, բայց ոչ մէկը պատոաստ չդուրս եկաւ: Նա իր դժոար դրութիւնից ազատոելու համար փոխեց խօսքը:

— Ինչո՞ւ ես կտրատում ճիւղերը, հայրիկ, ափսոս չէ՞:

Հայրը բացատրեց նրան պատոաստի նշանակութիւնը, աւելացնելով.

— Եթէ այդ աւելորդ, անպէտք ճիւղերը չկտրատեմ, դու այն քաղցր հոտաւէտ խնձորները, որ ուտում ես ձմեռը, այլեւս չես ուտի:

— Եր՞բ խնձոր կը տայ, հայրիկ, ո՞վ է իմանում, տասն տարուց յետոյ:

— Ինչո՞ւ տասը տարուց յետոյ, կարելի է երեք կամ չորս տարուց յետոյ, զաւակս:

— Բաս թող այդ մէկն էլ ես կապեմ:

— Հանգիստ կաց, Աշխէն, կը փչացնես:

— Ինչո՞ւ եմ փչացնում, երէկ այն կեռասենին ես կապեցի, փչացաւ՞:

Նա սկսեց կապել պատոաստի վէրքը. փոքրիկ մատիկները արագութեամբ գործում էին, իսկ անհանգիստ լեզուն խօսում էր:

— Գիտե՞ս մայրիկը ճաշի համար ինչ է պատրաստում:

— Ի՞նչ է պատրաստում:

— Շատ ու շատ բան է պատրաստում, տասն տեսակ, ասում է, այսօր Արփիարը ու Հիւբբին պէտք է գան Մուշից: Արշակին էլ կը բերե՞ն, հայրիկ:

— Կը բերեն:

— Ես Արշակին շատ եմ սիրում, Հիւբբիին էլ եմ սիրում, Արփիարին էլ եմ սիրում, բայց Արշակին շատ եմ սիրում: Հիմա Արշակը մեծացած կը լինի, հայրի՛կ, հիմա՛ խօսելիս կլինի... Ա՛խ, որքան ժամանակ է չեմ տեսել Արշակին... տասն ամիս կը լինի:

— Տասն ամիս որտեղի՞ց կը լինի, — նկատեց հայրը, — զատկին մեր տանը չէի՞ն:

Այդ միջոցին պարտէզի ցանկապատի մօտով անցնում էր մի սիրուն տղայ, որ Աշխէնից երկու տարով հազիւ մեծ կը լինէր: Գրքերը թեւքի տակին գնում էր նա դէպի գիւղական ուսումնարանը: Տեսնելով քրոջը, մօտեցաւ եւ ցանկապատի ետեւից ասաց.

— Աշխէն, ինչո՞ւ չես գնացել ուսումնարան:

Աշխէնը փոքրիկ ձեռքը տարաւ դէպի թշերի վրայ կապած սպիտակ թաշկինակը, պատասխանելով.